

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՍՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 11

15 Սեպտեմբեր 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ՀԱՄԱԶՍՅՆՈՒԹԻՒՆ Գիտութեան եւ Հասարակ (Շարայարեյի) — Յ. Վ. Բալաբեան.
2. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՇՆՈՐՀՈՒՄՆ.
3. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԻՏԱԼԻԱ.
4. ՔՆԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ .— Յ. Վ. Բ.
5. ԳԻՏԱԿԱՆՔ — Գ. Վ. Բ.
6. ԿԵԱՆՔ ԲԱՌԻՑ — Թ. Թեբեան.
4. ՄԱՐՄՆԱՄԱՐԶ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ (Շարայարութեան եւ վերջ) .— Յ. Վ. Անտոնով.

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻՒ 11

15 Սեպտեմ. 1891

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Ի Հ Ա Ի Ա Տ Ո Յ



Հաւատքը գիտութեան հետ կրնայ համաձայնիլ եւ իրօք համաձայն է արդեօք: Այս հարցման, կէս-գիտնոց աշխարհը կը պատասխանէ թէ, ոչ, եւ կը պնդէ թէ քրիստոնէական հաւատոյ ջատագովն յայտնութեան ու գիտութեան մէջ ներդաշնակութիւն մը գտնելու անկարող է, վասն զի արդի գիւտերն ամեն կարելի միտքամտութիւնը անհարկն ըրած են:

Այսպէս խօսելն բոլորովն տարասարտ է, եւ ոչ ամուր մի հիման վերայ հաստատուած է: Եւ յիրաւի, սա ստոյգ է թէ Աստուած չկրնար ինքն իրեն հետ հակասութեան մէջ գտնուիլ. հետեւադար ինչ որ յայտնած է չկրնար հակառակ ըլլալ այն բռնութեան երեւութից եւ անփոփոխելի օրինաց՝ որք զբովանդակ ախեղերս կը կառավարեն: Ով որ իմաստնագոյն եւ ամենակարող Աստուծոյ մը գոյութիւնը կ'ընդունի, պարտի հարկաւ այդ եզրակացութեան ճշմարտութիւնը ճանչնալ: Երբ միանդամ սոյն համաձայնութեան կարելիութիւնը կը հաստատուի, այլ եւս զիւրին է նորա գոյութիւնը ապացուցանել մէն մի գիտութիւնը մի առ մի քննելով:

Բայց այդ նախադասութիւնը ընդլայնելէն յառաջ, կը վայելէ որ երկու կարեւոր գիտողութիւններ ընենք, եւ երկու մասնինց այս է, բնութեան եւ Աստուածաշնչի մեկնչաց ողջմտութիւնը եւ զգաստութիւնը վիպ կոչեմք:

Պէտք է որ գիտունը առ հասարակ իրենց ասացուածոցը մէջ զգոյշ ըլլան, եւ տակաւին անստոյգ սկզբունքները հապճեպ տալնսպաւ ի կարգս առածից (axiome) դասելու, եւ դեռ երկրայական գիւտի մը վրայ յենլով հաւատքը թշնամանելու հակամէտ չըլլան: Գիտութիւնն ընութեան գաղտնիքը չունի տակաւին, օր քան զօր ընութիւնն արթննալու վրայ է, էր ուրեմն չ'սպասել առ ի դատել գայտնութիւնն որ իւր վերջին բառը ըսէ ընութիւն:

Իսկ քրիստոնէական հաւատոյ ջատագովն պէտք չէ որ գիտութեան զարգացման հակառակի, եթէ չուզեր իւր աղնիւ պաշտօնը սղարտել եւ մնասել: Նա մոռնալու չէ՛ թէ Աստուածաբանութիւնն իւր մեկնութեանց մէջ եւ մանաւանդ հաւատքին ուղղակի մնաս չհասցնող խնդրոց մէջ լայն եւ ընդարձակ ըլլալու է: Նոյնպէս միշտ զգուշանալու է զիսնոց ըրած գիւտերը զլանալէն, այսու պատրուակաւ թէ մի՛ գուցէ հակառակ ըլլան Աստուծոյ խօսքին: Աստուածաբանութիւնն մոլոր գիտութիւնէն վախնալու բան մը չունի, զի միշտ կրնայ հերքել զայն. ընդհակառակն նա միշտ կ'օգտուի ճշմարիտ գիտութիւնէն, վասն զի ճշմարիտ գիտութիւնը նոր ոյժ մը, աւելի մեծ ներդաշնակութիւն մը կուտայ ուղղափառ կրօնին:

Ուստի, մարդկային գիտութեան գլխաւոր ճիւղերը քննենք հետզհետէ, որպէս զի գիտութեան եւ հաւատոյ համաձայնութիւնը լաւ եւս յերեւան դայ: Այսու եղանակաւ, զիւրաւ կը հաստատուի թէ անհաւատ գիտուններն՝ որչափ եւ իրարու հակառակ կարծիքներ պաշտպանեն, որչափ եւ յայտնութեան միշտ ոտին հանդիսանան, յայտնեալ ճշմարտութիւնը միշտ պիտի յաղթանակէ, մինչդեռ հաւատոյ թշնամեաց տեսութիւնքը շարժուն աւտղի վերայ հիմնուած են:

Եթէ ամբարտաւանութեամբ եւ կուռակցութեամբ կոչրցած չլինէին, զիւրին էր նոցա իմանալ թէ յայտնութիւնն ոչ ուրեք կը հանդիպի այնպիսի ստուգութեանց որք կարենան նորա ստուցածը խախտել, այլ ընդհակառակն նա կը դանձ ամենուրեք լոյսեր, ներդաշնակութիւններ, ապացոյցներ՝ որ զայն կ'ամբարտնդեն եւ նորա շքեղութեան փառքը կ'աւելցունեն:

Օրինակ առնուհը այժմ Երկրաբանութիւնը:

Երկրաբանութիւնն է մի գիտութիւն՝ որ կը ճառէ երկրագնտիս բնական կազմութեանը եւ նորա ունեցած իոխակերպութեանը վերայ: Նա կ'ուսումնասիրէ նաև հանքային այլ եւ այլ խաւերը եւ երակները՝ որ նորա կեղևը կը կազմեն, եւ կենդանային ու բուսային տեսակները՝ որք թաղեալ կան ի ծոց նորա:

Երկրիս կազմութիւնը մեկնելու համար երեք դրութիւններ հնարուած կը կենան մեր առջև, Հիւլէականութիւն, Պիսիգոնականութիւն եւ Պլուտոնականութիւն:

Հիւլէականութիւնն կը սնդէ թէ անջրպետի մէջ սփռուած, ու բազկացութեան եւ ձողովեան օրինօք միացած հիւլէներէ երկիրս կազմուած ըլլայ: Այդ աշխարհածնական տեսութիւնն՝ հռչակաւոր բնագէտ եւ աստղաբաշխ Լաբլաօն հնարած գրութիւնն է, որ աշխարհիս նախնական նիւթը կ'ըմբռնէ «Էրբեւ միգամած մի, որ ցանեալ եւ ցրուեալ է շեղ ի շեղ ընդ անչափ տարածութիւն երկնից»: Ըստ հասարակ կարծեաց գիտնոց, «Եթեր կամ նիւթոյ սկզբունքը զառաջինն ստեղծուած ըլլայ: Ի սկզբան անդ կ'ստարեալ խաւար տիրած էր, յետոյ՝ ձողովեան կենդրոններ կը կազմուին ի միջավայրի, եւ շարժման սկիզբ ու տիւզերական միգամածներու սերմ կ'ըլլան: Սոյն միգամածներու կենդրոնացումն եւ թաւալման շարժումը յստաջ կը բերէ յղջերմութիւն, եւ բարեխառնութեան յաւելուլը կը ծնանի զոյս: Ապա միգամածներն կը խորտակուին, եւ նոցա լեկորք կը լինին հրաշէկ աստղներ: Երկիրս՝ այս աստղներէ մին է»:

Տիւղերական միգամածներու (nébuleuses) գրութիւնն թէև շատ մը դժուարութեամբք խճողեալ է, բայց եւ այնպէս առհասարակ ընդունուած է:

Պիսիգոնականութիւնն՝ երկրիս կազմութիւնը ջրոյ զօրութեան կ'ընծայէ: Այդ կարծիք՝ որ ի Գերմանիա պաշտպան ունեցաւ իրեն հնչակաւորն՝ Վուէռնեռ, այժմեան գիտուններէն լքուած թողուած է: Առ հասարակ ջրոյ ազդեցութեան ընծայել չեն ուղեր ժայռերու յօրինուածութիւնը՝ որոնք երկրագնտիս նախնական կեղևը, որպէս նաև նորս մակերևուածին վրայ տրամացած զանգուածները կը կազմեն:

Պլուտոնականութիւնն՝ երկրագնտիս կեղևը կազմող հաստատուն խաւերու եւ ժայռերու յօրինուածութիւնը՝ հրոյ ազդեցութեան կամ հրաշէկ նիւթերու ցրտացման կը վերադրէ: Այս երկրաբանական ժամանակամիջոցին մէջ հրածնուող երկիրներ

կազմուած են, որոնք տաստիկ ջերմութիւնէն հալած նիւթերէ յառաջ եկած են: Այդ գետիններն կը բովանդակին հասաքարը (granit), պորփիրները, բասալաքարը եւ հրահոսանքը (laves), եւ բրածոյներէ զուրկ են: Յետոյ, ըստ Պղուտոնականաց, ջրածնունդ գետինները, իսա խառու վրայ շարուած երկիրները՝ յորս առատ բրածոյք կը գտնուին, այդ հաստատուն հիմանց վրայ կարգաւ գետեղուած են: Այս կարծիքն հիմնեալ է, եւ մեր հաւանութիւնը ստուգիւ կրնայ յինքն գրաւել:

Արդ, այս երեք տեսութիւններն Աստուածաշունչի պատմութեան հետ կրնան արդեօք համաձայնիլ: Անշուշտ Մովսէս աշխարհածնութեան ճառ մը յօրինելու դիտաւորութիւն չունենալուն համար՝ կը շատանայ ըսելով թէ «ի սկզբանէ արար Աստուած գերկին եւ գերկիր: Եւ երկիւ էր աներեւոյթ եւ անպատրաստ, եւ խաւար ի վերայ անդնդոց, եւ հողի Աստուծոյ չըջէր ի վերայ ջուրց»: Ուստի, նոյն իսկ գիտնականօրէն սախարհիս արարչութիւնը կամ վեցօրեայ գործը մեկնելու համար, բաւ է ընդունիլ թէ Աստուած յոչնչէ ստեղծեց նիւթը՝ զոր յետոյ կատարելագործեց զօրութեամբ անսխալօրէն օրինացն, որոյ նոյնպէս հեղինակն ինքն է: Այսպիսի քացատրութիւն մը ընդ դէմ հաւատոյ չէ, եւ վերոյշեալ երեք կարծեաց հետեւողքն իսկ կ'ընդունին թէ նիւթն յաւիտենական չէ:

Իսկ թէ նիւթն յաւիտենական չէ, կրնայ արացուցուիլ ի ձեռն շարժման: Գիտութիւնն կը հաստատէ, եւ մեք ուրիշ տութիւ յուցինք ի «Պատկերի», թէ ի դադարման եզող մարմին մը չէ կարող անձամբ անձին զալ ի շարժումն, արդ՝ նիւթն է ի շարժման, ուրեմն չէ յաւիտենական: Ուրեմն, պէտք էր որ ուրիշ էակ մը այս շարժումը իրեն սար, եւ ըստ հետեւորդին, էր երբեմն յորում նիւթն ոչ գոյր...: Նիւթը մամսիկներէ կը բաղկանայ. եւ եթէ նիւթն յաւիտենական ըլլար, մէն մի մամսիկ եւս յաւիտենական ըլլալու էր, եւ հետեւաբար Աստուած: Եւ այսպէս, զքութուարութիւնը փոխանակ անհետ ընելու, առուել եւս ծանրացուցած կ'ըլլայինք, եւ, Աստուծոյ գոյութիւնը ուրանալ ուղելով, բովանդակ տիեզերքը անով կը լեցունէինք: Ուրեմն Նպիկուրոսի եւ Լուհրեոտիոսի հելլէականութիւնը չէ կարող առողջ մտաց սլահանջը գոհացունել: Յաւիտենից ի գոյութեան եզող հիւլէներ, որք զաշխարհ կազմելու համար ըստ Գեղաց կը միանան ի ժամանակի, պէտք էր որ անչափս իմաստուն լինէին, եւ մթթէ նիւթն կրնայ իմաստուն լինիլ: Այս հիւլէներն նոյնպէս աստուածութեան

մասնակից պիտի ըլլային, եւ մի՛թէ նիւթն կրնայ ստեղծել եւ կառավարել զաշխարհ, մի՛թէ նիւթն կրնայ զաշխարհ կառավարող օրինաց հաւատարակչութիւնը եւ ներդաշնակութիւնը պահել: Ոչ, զի յայտնամ նիւթն կը լինէր Աստուած. եւ անհունապէս զործօնեայ, հանձարեղ, եւ կատարեալ Աստուծոյ մը քով, անգործ, անհանձար, անկատար աստուածութեան մը դոյութիւնն չկրնար ըմբռնուիլ: Ո՞չ ապաքէն նիւթոյ կարողութիւնն ալ ոչ ինչ պիտի լինէր: Եւ մի՛թէ անկարող Աստուած մը ունենալու հարկաւորութիւն ունինք: Ուրո՞մն, նիւթոյն յաւետեանակամութիւնը կարեմք եւ պարտիմք մերժել. եւ Մովսէս իրաւունք ունէր ըսելու թէ «ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր»:

Այժմ ամիտիւնը զարգ ըսուածները: Յոյսնի է թէ աշխարհիս եւ մանաւանդ երկրիս կազմութիւնը կրնայ ոք ընծայել թէ՛ փեղերական միգամածներու ձգողութեան, թէ՛ ջրոյ սզրեցութեան, թէ՛ հրոյ զօրութեան՝ միշտ հաւատոյ սահմանաց մէջ մընալով, միայն թէ նիւթոյ յաւետեանակամութիւնը չընդունի: Մովսէս չըսէր մեզ թէ ինչ կերպով երկիրս իւր արդի ձեւը առեր է, եւ ասոր բացատրութիւնը ու մեկնութիւնը հետազօտելու ասեմ գիտնոց արգիլուած չէ իրենց առանձնակի կարծիքները պարզել:

Իսկ արդեօք սրչափ ժամանակ տեւեցին այն կերպարանափոխութիւնք որոնց վրայ դիտութիւնն կը խօսի՝ որպէս զի երկիրս իւր արդի ձեւն առնոյր: Ոչ ինչ փոյթ է մեզ յայտնանէ, եւ այդ կիտիս վրայ, հաւատքն ի վտանդի կործանման չէ: Աշխարհիս տարիներն մարդկութեան տարիները չին: Ուստի Մովսէս միշտ իրաւունք ունի ըսելու թէ «ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր»:

(Շարայարեղի)

Յովն. Վ. Բօլախեան

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՇՆՈՐՀՈՒՄՆ

Սրբոյն Ղազարու վանկը եւ Ռափայկեանն վարժարանը Հիւսւտոտ-
սական տուրքէն պէրժ կացուցանող Պաշտօնական Շնորհազիրը, որ ի Կա-
խարարութենէ Արդարութեան եւ Կրօնից ուղղեալ էր առ Ամենապ. Գեր-
եքն. Տէր՝ Տէր Ստեփաննոս Պետրոս Ժ. Կաթողիկոս-Պատրիարք Կիլիկիոյ,
և որոյ վերայ Պատկեր Հանդիսիս Զդ թուոյն մէջ գրած եմք, աստ կը
հրատարակեմք:

ԱՏԼԻՅԷ ՎԷ ՄԷԶԱԾԻՊ

ՆԵՋԱՐԵԹԻ



Էրևանի Գաթուղի Բախրէպիկէ

Բիւթպէթլու Էֆէնտիմ հազրէթլերի

Վենետիկոս վազը Էրմէնի Գաթուղի մանասթըրնոսաքի
րէհապիյն իլէ մէղքիւր մանասթըրն թահթը իտարէսինոս պու-
լընան ելթմիշ նէֆէր շակիրտանտան շէհպէնտէրլէր հիզամնա-
մէսի մուճիպինճէ սէնէվի պլընմադ իսթէնիլէն երմիշէր դլուշ
խարճըն աֆվընա տայիր վուգու պուլան իսթիտափ ասըլանէլէ-
րինէ մէսի, մէղքիւր մանասթըրն իրի երևզ սէնէտէն պերու
Վենետիկոս թապիլէթը Օսմանիլէյի մուհաֆազա իլէ մէպէքը
տատաղաթտան ինհիրաֆ իսիլմէմիշ օլտուլու կիպի, մէքթէպ
շակիրտանընըն էքսէրի ֆուգարա աիլէրինէ մէնտուպ օլմաղլա,
էլթաֆ վէ միւտատէի սէնիլէի հազրէթը Բատիշահիլէ միւլթա-
հազգ պուլուտուղլարընտան, մէղքիւր մանասթըրա մէնտուպ
րէհապիյն իլէ անըն թահթը իտարէսինոս պուլուճան մէքթէպ
թալէպէսինին րէմը մէղքիւրտէն աֆվը իլէ թապիլէթը Օս-
մանիլէ թէվէթէրէրինին իթասը Շուբայի տէվլէթտէն վէրիլէն
գարար իւզէրինէ պիլ իսթիլան իրատէի սէնիլէի հազրէթը Բա-
տիշահի շէրէֆաստըր օլարադ, իտարիճիլէ նէղարէթը ճէլլէսինէ
պիրտիրիլտիկի պա պուլուլտուի Սամի իշար պուլուլտուշ
օլմաղլա պէյանը հալէ իպթիտար գըլընտը Էֆէնտիմ:

19 Օգոս. 1307

26 Մուհարրէմ 1309

Իհւ

Արլէյէ վէ Գեանէպ Զալլըր

ԱԼԻ ՐԻՁԱ

ԲԱԶԱՆԱՅԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ

ԵՒ

ԻՏԱԼԻԱ

ԵՒ ՏԷՊԱ ՕՐԱԳԻՐՆ



Պ. Անաթօլ Լըրուա-Պօլէօ, Journal des Débats Օրագրին հըռ-
 չակաւոր խմբագիրն, որ Իտալական ինտելիքներու մէջ ամենամեծ
 համուժիւն ունի, ոոյն վերոյիշեալ օրագրին մէջ հանգուցեալ
 Հայր Քուրչիի վերայ նշանաւոր յօդուած մի հրատարակած է:
 Ինչպէս ամենուն ծանօթ է, հոչակաւոր Հայր Քուրչի Յիսուսեան
 կրօնաւորն Պիոս Թ. Ի. Քահանայապետութեան վերջին ժամա-
 նակներն Քահանայապետութեան եւ Իտալական Տէրութեան մէջ
 համաձայնութիւն մի գոյացնելու աշխատած, եւ որոյ համար Յի-
 սուսեան կրօնքէն եւս ելած էր: Լեւոն Ժ. Քահանայապետն
 զինքն ի Վատիկան ընդունեցաւ, բայց Հայր Քուրչի, փոխանակ
 իւր գաղտնիքը մեղմացնելու, առաւել եւս սկսաւ սաստկացու-
 նել, եւ ըստ այսմ եւս հրատարակութիւններ ընել. որոյ համար
 այլեւս ի Վատիկան մուտ չդատաւ:

Արդ Պ. Լըրուա-Պօլէօ գեղեցիկ դատաստան մի կ'ընէ անդ
 այս եւ ասոր նման վերահաշտութեան ծայրայեղ ախոյեաններուն
 վրայ, որք statu quo, այս է ներկայ դրութիւնը Քահանայապետին
 ընդունիլ տալ, եւ Քահանայապետութեան բարոյական զօրութիւնը
 յօդուա Իտալիոյ դրաւել կ'ուղեն: «Տէպա» Օրագրին խմբագիրն
 համոզուած է թէ, Հայր Քուրչիէ քարոզեալ եւ պաշտպանեալ ի-
 բարու հակառակ Չ Հռովմ քաղաքաց միաբանութիւնն (il connubio)
 Քահանայապետութեան դէմ լարուած եւ լարուելիք դարմանե-
 լուն մէջ ամենէն վտանգաւորն է: Ինչպէս, կ'ըսէ, կը համարձակին
 երազել զհանակցութիւն մի Վատիկանու բանաստիճանն եւ ի
 կուրիլնալ Պալատն թաղաւորող հարստութեան մէջ:—Պ. Լըրուա
 -Պօլէօի խօսքերը կը թարգմանուիք աստ ըստ առ բառ:

«Կաթողիկէ Եկեղեցւոյ յատկութիւնն, կ'ըսէ, անոն որ զինքն
 ամեն այլ դաւանութիւններէ գեր ի վերոյ դասած է, անոն որ դա-

րուց չըջանին մէջ իւր ոյժն, եւ իւր պատմութեան հրաշքն եղա՞ է, է գի ինքն միայն կարողացաւ աշխարհիս վերայ իշխաններէ եւ ժողովուրդներէ անկախ հոգեւոր իշխանութիւն մի կազմել: Եւ այս՝ իրեն համար անհրաժեշտ պէտք մի է, եւ իւր գոյութեան առաջին պայմանն եղած է: Այսու միայն կարէ ինքն ընդհանուր Եկեղեցի, միջազգային, կամ լաւ եւս, գերազգային մեծ հաստատութիւն մի, եւ Տէրութեանց պատերազմներէ եւ ազգաց մրցումներէ դեր ի վերոյ մնալ: Չէ կարող ինքն, առանց ինքնասպան լինելոյ, այլու՞ ենթարկուիլ կամ ընտանենայ: Հրոտումէական լինելէ յառաջ՝ Կաթողիկէ է ինքն, եւ չկարէ Կաթոնականութիւն եւ կամ ռամկապետութիւն ըլլայ այն: Այնպիսի բան մի է այս, զոր սուրբ Աթոռն, իւր պատմութեան ամենատխուր օրերուն ատեն, երբ իւր գառակարգերուն մէջ եւս իւր իշխանութիւնն հերետիկոսութեան կողմանէ մերժեալ կամ հերձուածողներէ եւ հակա-Պապերէն հարուածեալ էր, թող չտուաւ Գերմանական նոր-Կեսարներուն, եւ զոր Քահանայապետութիւնն զլացաւ արդի Դարօսմանեօյի, այսինքն Մեծին Նաբօլէօնի, որ Կայսերութեան դադափարը մարմնացուցած էր, չկարէ անշուշտ առանց իւր իրաւանց կորստեան, չնորհել Մալթիտիոսական կոմսերուն ժառանգաց, Իտալիոյ արդի թագաւորաց:

Քահանայապետական թագին յիշողութիւնն սուր է, կը յիշէ թէ ինչ վնասներ չկրեց Ավինիօնի գաղթն եւ Գաղղիոյ թագաւորներէ կախումն, մինչդեռ մեր թագաւորաց Լուիսն շատ հեռի էր Բօնի եղերաց աւատական պալատէն, որչափ չէ այսօր Յաւտենական Քաղաքին նոր թագաւորաց բնակարանն Արբոյն Դամաստի (Վատիկանու) Պալատէն:

Այն բանը, զոր մտայտած էր Հայր Քուրչի, Յիսուսեանց Մեծաւորն եւ Հռովմայ Քահանայապետական Արքունիքն քաջ իսկ զգացին: Սուրբ Աթոռն չկրնար որ եւ ինչ ժամանակաւոր Տէրութեան մի հետ ձուլուիլը կամ միաւորիլը յանձն անուլ: Սալօ-յիայի Գերդաստանին կազմած Իտալիան կարողացաւ Քահանայապետական Երկիրները ի մի ձուլել, այլ չկրնար Քահանայապետութիւնը միաւորել: Որչափ առաւել Իտալական միութիւնն Հռովմայ երկրային իշխանաց նիւթական կախման մէջ դնել կը թուի Հռովմայ Եկեղեցին եւ նորա Գլուխը, այնչափ առաւել Քահանայապետն կը պարտաւորի հաստատել իւր հոգեւոր անկախութիւնը:

Ապա թէ ոչ, ի փոխարէն քանի մի առժամանակեայ շահուց եւ արտաքին պաւուոց, որք կ'ամփոփին յեղերս Տիբեթի, Քըրիտասի Փոխանորդն վասնզի մէջ պիտի գնէր այն տիեզերական իշխանութիւնը, զոր իւր նախորդք փոքր սոս փոքր կարացին կազմել: Վատիկանու եւ Կոնիքինալի մէջ եղած խնդիրն յաւէտ Քահանայապետական թագին հոգեւոր իշխանութեան խնդիրն է, քան թէ 1870 թուականին Սեպտեմբերի մէջ բեկեալ երկրաւոր թագին խնդիրն: Սուրբ Աթոսոց նկատմամբ խնդիրն բուն Եկեղեցւոյ միութեան խնդիրն է: Պ. Ռոնան գուշակել ուզած էր թէ, Քահանայապետաց ժամանակաւոր իշխանութեան անկումն՝ Սըրբայն Պետրոսի խորհրդաւոր իշխանութեան կործանման պատճառ պիտի լինէր: Եթէ Քահանայապետութիւնն, իւր մեծ աւանդութիւնները մոռանալով, Իտալիոյ պաշտօնեալն եւ կամ յաճատորն դաժնայր, կարելի էր յայնժամ զի այն գուշակութիւնն կատարուէր, եւ անկար պատմուճանն ցմբշտ պատուէր: Վատիկան եւ Կոնիքինալ կարի մերձ են միմեանց, այնպէս զի նոցա մէջ ըլլալիք որ եւ է համաձայնութիւն կարելի չէ զի երկուքին մէջէն միոյն ի միւսէն կախման եւ Կաթողիկեայ շահուց հետ շփոթման չյանդի:

Քահանայապետք վտանդէն զերծանելու համար միակ միջոց մի ունին, այսինքն Տէրութեան Գլխոյն հետ որ եւ է կապ ունենալէ զգուշանալ, որ Գլուխն Քահանայապետական Մայրաքաղաքը՝ իւր ազգային մայրաքաղաքը ըրած է: Եւ Սըրբայն Հայրն, ամեն աշայ առջև իւր անկախութիւնը հաստատապէս յայտնելու համար, ստիպեալ է մեկուսի կենալ այն իշխանութիւններէն, որք Եկեղեցւոյ օրինաց այսչափ երկար ժամանակ հրպատակած քաղաքը կը կառավարեն: Որպէս զի Քահանայապետքն իւր սեղ իշխող թագաւորին հպատակն չ'երեւի երբեք, հարկ է զի Վատիկանու միայնութեան մէջ փակուի՝ իւր թանգարանաց մարմարիտեայ Արձաններուն հետ: Քանի որ Հռոմ Քահանայապետէն դուրս այլ թագաւոր մի ունի, Քահանայապետն չկարէ սպրկլ անդ՝ եթէ ոչ իբր ի բանտի:

Ստուգել ծերունի Քահանայապետաց համար տաժանելի է այգորինակ զերութիւնն ի խորս ցուրտ արահից մի վատառողջ պալատան: Կարելի է թէ Պիտի Թ. ի. եւ Լեւոնի Ժ. Գ. յաջորդք յորին այս ճանճրանալի արգելական բնակութիւնէ՝ որ Հռոմայ մի ծայրն է: Բայց Վատիկանու պատերէն դուրս ելնելու, եւ ի հարկի՝ միացեալ Իտալիոյ մէջ սպրկելու նոր չե մի դանելու հա-

մար հանրի է արդեօք զի զրկեալ Քահանայապետք Սրբոյն Պետ-
րոսի բանալեօք կնքեալ հաստատեն անձնատրութեան դաշինք
մի այն իրազարական Գերդաստանին հետ, որ այսօր նոցա
Մայրաքաղաքին մէջ կը թագաւորէ: Միթէ Իտալիոյ եւ Սալ-
օյիայի Գերդաստանին ճահատագիրքն իրենց մէջ անջատի ան-
քակ զօղիւ կապեալ են, զի Քահանայապետութիւնն, իրեն ա-
պագային նկատմամբ ընկելք հաշուոց մէջ, չկարենայ զանոնք
յիրերաց բաժանել: Կը համբերէ, քանզի յաւիտեանական է առածն
արդեօք այլեւս ի ճան չպիտի գայր նկատմամբ այն հարստու-
թեանց, որք յեղաշրջութեանց շնորհիւ Իտալիոյ վերայէն կ'անցնին:

Վատիկանու մէջ նոր գաղափարներ մուտ կը գտնեն: Այն-
պիտի ինտելիքներ կը յուզուին անդ, որք ատի տասն եւ հինգ
տարի յառաջ անպատեն պիտի թուէին: Անդ ապագային նկատ-
մամբ հայեցուածք առաւել հեռուն կը ձգտին, քան թէ Փիէզօ-
լէի (Հայր Քուրչիի բնակած քաղաքն) ութնամեայ անապատա-
կանին տկար աչքերն: Քահանայապետական յարկաց բարձունքէն
հորիզոնը քննելով, կը նշմարուին ի բարձունս անորոյ հեռա-
պատկերք, որոց նկատմամբ Հայր Քուրչի հազիւ թէ կը կաս-
կածէր:



ՔՆԼԵԱՐԿՈՒԹԵԱՆ (HYPNOTISME) ՎՐԱՑ

ԵՐԵՒԵԼԻ ԳԱՂՂԻԱՅԻ ԲՆԱԳԷՏ

ՄՕՐՕ ՔԱՅԱՆԱՅԻՆ ՄԷԿ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Թէ որքան կարեւորութիւն եւ այժմնութիւն ունի այս խնդիր, յայտ ածաի է զի ընդ համօրէն Եւրոպա եւ ի մասնաւորի ի Գաղղիա՝ օրուան խնդրոց կարգը անցած է: Ի կաճապ եւ յակումբս զիսնոց կը խօսին, կը վիճեն քննարկութեան վրայ: Չկայ հանդէս մը, պարբերական մը, օրաթերթ մը որ մի քանի սիւնակ չընծայէ այսմ: Արդէն՝ Ալֆրէն եւ Ժան Մարի անուամբ քննարկութիւնն ունի: վրպասանութիւններ՝ յորս կ'ուսուանասիրուի այս խնդիր: Ի նկարահանողէս իսկ Փարիսի քննարկութիւնն կը ներկայացունէ զիւր նկարս: Չկայ խնջոց մը, խրախճանութիւն մը ուր չհրակիրեն մի համբաւաւոր քննարկու: Ի Փարիս ամեն երեկոց եւ իւրաքանչիւր կիւրակէ՝ հայրեր ու մայրեր խումբն ընթաց կը տանին տղայքը եւ օրիորդները ի թէատրոնն Տիքսոնի՝ ուր մագնիսականութեան եւ քննարկութեան դերեր կը կատարուին:

Այն բնական հետաքրքրութիւնն՝ զոր իւրաքանչիւր ոք ունի նորանշան բաներ տեսնելու եւ լսելու, պատճառ եղաւ որ, յԵւրոպա՝ մի քանի տարուան մէջ շատ մը գրքեր հրատարակուեցան քննարկութեան եւ նորա փորձերուն վրայ: Հանգւտ այնքան գրուածոց, ճառից եւ խօսից՝ պատշաճ դատեց մեր Հանդէսն ալ՝ իւր մի քանի թիւերուն մէջ՝ համառօտ այլ հմտակց տնտեսութիւններ եւ գաղափարներ ընծայել իւր յարգոյ ընթերցողաց նկատմամբ քննարկութեան:

Նոցին իբրև կնիք՝ թերևս օգտագործի չըլլար զնկ հոս հատուածներ այն յառաջաբանէն զոր՝ Պոսիւէ-դպրոցին նախկին տնտեսն՝ Մօրօ քահանայն, իւր «Ուսումն գիտական եւ կրօնական ի վերայ քննարկութեան» յորջորջած եւ ընդ հուպ ի լոյս ընծայելի մատենին համար գրած է:

Յարգ. հեղինակն՝ մի առ մի թուելէն յետոյ թէ ինչպէս ամեն ուրեք մուտք գտած է սոյն քննարկութիւն, կը շարայարէ այսպէս:

«Հետի չէ թերևս ժամանակն յորում «Հանրէս քննարկութեան» պլատի փոխանակէ զ: Երբեք է: Իրայ ընթացքին նայելով արդի

ներունք ընկերական բարոյականի ճշմարիտ յեղափոխութեան մը հանդիսատես պիտի ըլլան: Այսօր պէտք է տակաւին մագնիստը մը կամ թելադրիչ մը: Վաղիւ թերեւս յանուզն ոք պիտի հրատարակէ թէ արտաքին զոյարանաց վրայ արտաքին աշխարհի ունեցած ազդեցութիւնն այնպիսի իմն եղանակաւ ուղեղին կ'ազդէ որ անհատութիւնն կ'անհետանայ բացարձակ կրաւորականութեան տեղի տալու համար: 'Ի սկզբան պիտի ծիծաղին, յետոյ մի լրաքաղ պիտի երթայ հարցադնդելու հեղինակը, ապա լրագիրք պիտի հակաճառեն եւ այսպէս անոր տեսութիւնը պիտի ծաւալի:

Վերջապէս, քննարկութիւնն անցեալ տարի սոաշտօնապէս մուտք գտաւ քրիստոնէական բեմերու վրայ: Մեզ, քահանայիցս համար, այս նշան է թէ այլեւս եկած հասած է այն ժամն յորում ներեալ չէ մեզ այս խնդրոյն անզոյաց գանուել: Արդէն 1853 ին Կիպ'ը Եպիսկոպոսին կենդանական մագնիսականութեան վերայ ըսածը կրնամք քննարկութեան համար ալ ըսել «Որչափ որ սոյն գործողութիւնք լոկ զրօսեցուցիչ մի յատկանիչ եւ հանգամանք ունեցան, կամ որչափ որ հետաքրքրութիւնն վնասուց միայն ընութեան մէջ տարածուած մի հոսանքի արդիւնքը, մեր հոգածութիւնն չխոտլեցաւ երբէք: Այսօր մեր պարտքն է հասկցնել ժողովրդեան եւ զգուշացնել հաւատացեալները ստախօս ստամանայի թակարդներուն դէմ, հսկել հաւատոյ անարատութեան եւ սրաւոյ քրիստոնէական անուան»: Ուստի յետ այսորիկ քահանայից համար պարտաւորութիւն մի է քննարկութիւնը իւր Աստուածաբանական ուսմանց կարգը զասել՝ իւր ժամանակի զիտակեն եւ կրօնական շարժումներուն օտար չնկալու եւ հոգւոյ քով իւր ունեցած առաքելութիւնը վտանգի չենթարկելու համար:

Եւ յիրաւի, նորածին քննարկութիւնն իսկոյն ոստիս հանդիսացաւ քրիստոնէական վարդապետութեան դէմ: Եւ չհասկցուիր թէ Տքդ. Պերիլոն ինչպէս կ'իշխէ հաստատել թէ, իւրեանց ազատութեամբն Գաղղիոյ Եպիսկոպոսունք մնծ համակրութիւն մը յայաննելին «քննարկութեան բուժիչ եղանակին» եւ մանաւանդ թէ Հոովմայ արքունիքն «Լերջապէս յայտարարեց թէ քննարկութեան երեւութից իրականութիւնն աշխարհիս մէջ գանուող իրաց ամենէն աւելի աներկբայելի եւ լաւագոյնս արայցուցեալ «մի իրողութիւնն է, եւ թէ քննարկութեան քորձածոսելինը ինչ որոտած է . . .» Ստուգիւ զաւալի բան է, որ Տքդ. Պերիլոն զանց

ըրած է մեզ նշանակիչ այն տեղին՝ ուստից հանած է այսպիսի երեւելի յիշատակարաններ: Մեզի համար, մեք շատ կը փափաքէինք զանոնք ալ Պերիլոն, Բօլ Պէր, Հոննետար, Պուանդիլլ, Լիւլի, Ռիշէ տորպորութիւնները կրող յիշատակարանաց զիմացր զնել, յորս սոյն մատենապիւրք կարծես թէ քրիստոնէութեան շինուածոյն հիմը ապահովապէս տապալիւու համար իւրեանց զնուութիւնները նշանակած են, եւ յորս նոքա չէ թէ միայն ո՛ր եւ է կրօնական գաւանութեանց նկատմամբ մեծ արհամարհութիւն մը կը ցուցնեն, այլ նաեւ կեղծել խիչ չեն զիտեր այն ուշախոթութիւնը զոր կը զբան երեւակայելով թէ իրենց զիւտերն պիտի թազեն ցմիշտ հրաշքները: Ապաքէն, մեք չեմք որ քննարկութիւնը Ատուածարանական ինտրոյ տակ ձգեցինք, այլ նոյն ինչն քննարկուք՝ որոնք կ'ուզեն զայն գործածել իբրեւ կործանիչ նորահար մի մեքենայ ընդդէմ կաթողիկէ հաւատոյ:

Յաննչանից մինչև. ցերեւելիս՝ չիք ոք որ ամեն կերպ յայտնութիւնը, գերագոյն կարողութեան մը եւ բնութեան մը ազդեցութիւնը եւ ներգործութիւնը չուրանայ բարձրաձայն. եւ Աւետարանի հրաշքները ջղային գրութեան երեւոյթներովը եւ թելագրութեամբ մեկնել չյանդգնի. եւ միայն Դոնատո չէ որ կը զոչէ «Յիսուս մագնիսողաց մէջ ամենաքանչկլին եղաւ, . . . Յիսուս հիւանդները կը բժշկէր զանոնք մագնիսացնելով»: «Հին ատենները, կը զրէ Տքզ. Պոթէյ, Յիսուս Բրիստոս, առաքեալք, քահանայք բժշկութիւններ կը կատարէին գրութեամբ ձեռաց, որպէս Պիւթեան վճուկը եւ մագնիսողք»: Տքզ. Պուանչայմ, որ լէւրո-լէան վրաց զրած իւր մատենական առաջին տպագրութեան մէջ, գերբնականի նկատմամբ ամեն հակառակութենէ դերծ կ'իւրուէր, իւր երկրորդ տպագրութեան մէջ, ուղղակի Լուրտի հրաշքներուն դէմ կը խօսի: Տքզ. Ժիպլէ՝ իւր պատմական քննական, եւ փորձառական ուսմանց արդիւնքը ընթեցողաց ծանօթացնելէ յառաջ՝ կը յայտարարէ թէ ինքն՝ սքանչելեաց եւ դերբնականի անհաշտ թշնամի է, նա իւր գրքոյկին յառաջարանը սա յայտարարութեամբ կը սկսի «Մե՛տ սքանչելեաց եւ խորհրդաւորութեան (mystique) իշխանիւն է՛մ, եւ զէ՛մ՝ ընդոսնիք լէ բնութեան օրէնքէն՝ դո՛ւրս կարենայ բան մը յառաջ բալ»:

Սթրաւսի, Ռենանի, Գարլ-Հազի հետեւելով սոքա ամենեքեան՝ Տեան մերոյ գործած յարութեան հրաշքները՝ քնսիրութեամբ (léthargie) վարակեալ անձանց արթննալուն կը նմանցնեն պարզաբար: Ի կանա Գալիլիացուց ջրոյն ի գինի փոխուիլը թե-

լաղրութեամբ կը մեկնեն, բժշկութիւնները՝ կենդանական մագնիսականութեամբ: Ըստ կարծեաց նոցա, տեսաւես կնոջ բժշկութիւնն արդի մագնիսական բժշկութեանց բոլոր ձեւն ու եղանակը ունի: Ինչպէս որ Վոլթեր կ'ըսէր «վստանունը ջախջախենք», սոցա համար վստանունն է գերբնականը:

Դժբախտաբար քրիստոնեայք ոմանք, սղխութեամբ եւ նորանչան բաներու ունեցած կախարդանօք, քնէարկութեամբ կը խաղան առանց վտանգը կասկածելու: «Քնէարկեալն, կ'ըսէ Տ. ք. Պառթ, ճշմարիտ խելագար մի է, նորա իմացականութիւնն կը խանդարէ իւր ամենածածուկ զսպանակներով, այնպիսին խելագարէ մ'աւելի ո՛չ անձնաւորութիւն եւ ո՛չ պատասխանատուութիւն ունի» Իսկ, ընդհակառակն, փափկախիղճ անձինք՝ օրինաւոր եւ բուռն անձկութիւն մը կը զգան, լուսաւորիլ կ'ուզեն, եւ մեղ կը հարցնեն: Արդ՝ ինչպէս իրենց պատասխանել՝ եթէ ոչ թախծազին հառաչանօք եւ սրտաբեկ շարժամբ, եթէ մեք եւս այդ ինտրոյն նկատմամբ լոկ բանդագուշանքներ ունենամք:

Դիտական ապացոյցներով սոյն բանդագուշանաց տեղը լեցնելու համար է որ Նպխսկոպոտունք եւ եկեղեցականք կ'աշխատին, որ եկեղեցեաց բեմերէն քնէարկութեան վրայ ճառելու հրաման կուտան: Ականաւոր եպիսկոպոս մը կ'ըսէր վերջապէս, «Եթէ հանդէմներու եւ լրտորաց մէջ երկու բան միայն զիս կը յանկուցանեն. ի քաղաքականութեան, ընկերական խնդիրն. ի հոգեբանութեան՝ քնէարկութիւնն»:

Դժբախտաբար, քնէարկութեան վրայ խօսող եկեղեցական մատենադասաց երկեր՝ յոյժ ստիւաւաթիւ են. մինչդեռ քնէարկուաց գործքեր հարիւրաւոր կը համրուին, եւ ամեն օր նորանոր ուսմունք կուզան յաւելուլ քնէարկութեան վրայ: Պէտք է որ մեք ալ քայլ առ քայլ անոնց հետեւինք, եւ նիւթոյ ցամաքութենէն եւ տարօրինակութենէն չսարսնելով՝ նոցա զիւտերը ծանուցանենք անոնց՝ որք ո՛չ ժամանակ եւ ո՛չ զիւրութիւն ունին բուն աղբերց զիմելու:

Հոս, Յարգ. հեղինակն՝ իւր երկասիրութեան նկատմամբ բռնած ընթացքն ու ոճը ի յայտ ածելէն յետոյ՝ կը յարէ այսպէս, «Ես բուն աղբիւրներուն զիմեցի, եւ կարի շատ վերահատու եղաց թէ, ի քնէարկութեան, որպէս նաեւ յայլ ամեն խնդիրս՝ մատենադիրք զիրար կ'ընդօրինակեն առանց դայն ըսելու: Այս նեղութիւնն ի քնէարկութեան կ'ըլլայ մի ճշմարիտ խաբէութիւն, վասն զի մի եւ սոյն իրողութիւնն հարիւր անգամ հարիւր այլ-

եւ այլ ընդօրինակիչներէն պատմուելով՝ կարծել կուտայ ընթերցողաց թէ մի փորձառութեան ի նպատակ հարիւր իբրդութիւն կայ, մինչդեռ մի եւ նոյն Ռոզա, Նսթեր կամ Էլիզա օրիորդն է որ մի եւ նոյն դերը կը կատարէ: Այս Լաֆոնթէնի առակին կրկնութիւնն է

. . . բիւ հաւկրթաց ընդ այս համբաւ,
բերնէ բերան կ'աճեր տակաւ,
նախ քան ըզմուտս արեգական
հարիւրաւոր համբեր խառման:

Ուստի, ես ընդօրինակիչները մէկդի թողլով՝ մի միայն ուսուցչաց եւ նոյնի համբաւաւոր աշակերտաց յարեցայ: Սալբերդիէրի զարոյցին համար Տ. ք. Թուռնի ի եւ Պոթէյի երկասիրութիւնքը կարգացի: Տ. ք. Պոննայի գրուածոց մէջ թերադուրութիւնը ուսումնասիրեցի, Օգոստինի զբքին մէջ մտաւորական թերադուրութիւնը, Պառէթիի զբքին մէջ Չլային ճառագայթարձակ զօրութիւնը եւն: Իմ նպատակս այն եղաւ որ զիս ընթերցողներ առարկութեանէ մը, կամ եղած փորձէ մը չչլիոթեն, այլ կարող ըլլան զանոնք հերքել, եւ զասոնք լուտաւորել, մանաւանդ զթուարակիւն խնդիրներուն կատակարանութեամբ կամ անհիմն մերժմամբ երբեք պատասխան չտան:


Լուկրետիոս՝ անցեալ սերունդքը ապագայ սերնդոց միացնող կապը գեղեցկայարմար օրինակաւ մը կը բացատրէ: Նա մեզ կը ներկայացնէ հին Ժամանակի յառաջընթացները՝ որք յասպարէզ կը նետուին ջահ մ'ունելով ի ձեռին. յետոյ՝ երբ չնչասպառ կը համոյն ի վախճան ընթացից, ջահը կը յանձնին այլոց՝ ոչք հետադոյն եւս կը տանին, եւ զոր թաղկացեալ ձեռք թողուն փախչիլ:

Et quasi cursores vitae lampada tradunt

Եւ որպէս յառաջընթաց կենաց գշահս յանձնեն:

Մեզ քահանայիցս համար, սոյն ջահն է կաթողիկէ վարդապետութեան աւանդը՝ զոր Սուրբ Գահն կ'ուսուցանէ եւ կը բացատրէ, եւ որ՝ յաւուր ձեռնադրութեան մերում մեզ յանձնուեցաւ ի Ս. Եկեղեցւոյ 'ի ձեռն Եպիսկոպոսաց:

Յ. Վ. Բ.



ԳՐԾԱԿԱՆՔ

ԵՐԿՐԻ ԱՌԱՆՑՔԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Երկրի թաւալման առանցքին վրայ դիտուած փոփոխութեանց առթիւ, յայտնուեցաւ թէ օդոյ ճնշման բաժանման ստեղծելու ջրոյ զանգուածոց շարժման մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը՝ կրնան ուղիւստ մակերեւութին վրայ երեւելի տարբերութիւններ յառաջ բերել: Պ. Լամբ կը նշանակէ թէ, ամառը մինչդեռ արեգակն հաղ քան զհաղ կը բարձրանայ, ուղիւստեան եւ կանոնաւոր հողմոց վերնադաւառին մէջ օդոյ մեծագոյն ճնշումը զէպ ի հիւսիսային դօտին կը տեղափոխուի: Այսպէս, յամառային եղանակի հարաւային կիսագնտին բաւական շատ ջուր կ'անցնի, եւ հաւանական չթուիր թէ վարի հողմոց ձեռքով փոխարինութիւն մը տեղի ունենայ: Տարին իւր չըջանը յառաջ տանելով՝ ջուրերը կ'սկսին հարաւային կիսագնտին անցնիլ եւ մեր ձմեռուան ժամանակ իրենց բարձրագոյն աստիճանին կը հասնին: Զրոյ զանգուածոց այսպէս պարբերական տեղափոխութիւնէն է որ, կ'ըսեն, երկրի առանցքին պարբերական փոփոխութիւնը յառաջ կուգան: Պ. Լամպ հաշուեց թէ լայնութեան 0,5, փոփոխութիւն մը յառաջ բերելու համար բաւ է որ, Պետլինի 180 աստիճան երկայնութենէն հաշուելով, 2,500 խորանարդ մեղր ջրոյ զանգուած մը՝ հարաւային լայնութեան 30° էն հիւսիսային լայնութեան 35° ին ուղղութեամբը շարժի: Ըսկ ուղիւստ մակերեւութին վրայ 10 հարիւրորդամեղր բարձրութիւն մը հաղիւ տեղի կ'ունենայ:

*
**

ԿԱՐԿՏԱՐԳԵԼ (PARAGRÈLES)

Գաղղիոյ Թարսզ դաւառին չըջակայից ստէպ կարկուտ տեղալով մշակութեանց մեծ վնաս կը պատճառէր, հունձքերը կ'ապականէր եւ ջերմանոցներու (serre) սպողիները կը խորտակէր: Այդ աղետից առջիւր առնելու համար Պ. Վաւորնա, հարաւային դիտանոցի անօրէնն, հետք մը մտածած է: Իւրաքանչիւր բըլրոց վրայ դեռեղել տուած է սրածայր ցիլցեր՝ որոնք երկտորական թելերու միջոցաւ իրարու հետ հաղորդակցութեան մէջ կը գըտնուին, եւ այդ թելերու ծայրը գեալինը խօթուած է: Այս օրինակ շանթարգելք, որոնք փոթորկալից ամպերու երկտորական ձգտումը մեղմացընելու պաշտօնն ունին, թոյլ պիտի չտան որ կարկուտներ ձեւաւորուին ամպերու մէջ:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱԳՈՒԹԻՒՆԸ

Քանաոայ քաղաքին երկայնութեան աստիճանը կրինվիչի ժամուն հետ ուղղակի բաղդատելով ճշդիւ որոշելու համար, Մօնրէպլի վարժարանին մէջ կառավարութեան ձեւնստութեամբ կատարուած աշխատութիւնք, ելեկտրականութեան նկատմամբ չահեկան ուսումնասիրութիւն մը յառաջ բերին:

Ելեկտրական աղղանշանի մը, որպէս զի ովկիանոսը անցնի, որչափ ժամանակ պէտք ըլլալը զառաջինն որոշել հարկ եղաւ: Այտու նպատակաւ յորինեցին պարունակ մը (circuit), որուն ծայրը Մօնրէպլէն սիսելով պիտի անցնի Իռլանտայէն եւ նորէն պիտի գայ միւսնայ ի Մօնրէպլ: Ելեկտրական հոսանքը առաքող եւ ընդունող գործիքին վրայ ժամանակաչափ մը հաստատեցին, որով պիտի կարենան ճշգրել տրուած նշանին եւ Ատլանտիան ովկիանոսը երկիցս անցնելով վերադարձող նշանին մէջ անցած ժամանակը: Հարելը անգամ կրկնուած զննութեան արդիւնքն է միջին հաշուով 1,05, այսչափ երկայն միջոցի մը համար, որ զրեթէ 13,000 հազարամեդր է: Փորձերը դեռ պիտի շարունակուին մինչեւ որ ձեռք բերուած արդիւնքներու ճշդութիւնը ստուգուի: Եւ համարտադրող թիւը (coefficient) որոշուելուն, Մօնրէպլի եւ Վանքուվերի մէջ գործողութեան պիտի ձեւնարկուի Canadian Pacific Railway ընկերութեան հեռադրական թելերու միջոցաւ զոր Բնկերութիւնն զննողաց արամսդրութեան ներքեւ կը թողու:

*
**

ՆԱԽԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԱԿՆՈՑ

Արդէն ծածոթ էր այն անամնաբուժի պատմութիւնը, որ իւր անամնոց աչքը կանաչագոյն ակնոցներ կը դնէր ամենաչոր խոտը դալարիքի տեղ անոնց կերցունելու համար: Այժմ անգլիական լրագրի մը տուած լուրին համաձայն, այդ վագիմի ծաղրաբանութիւնն իրականութեան մը փոխուած է, սա տարբերութեամբ որ այս անգամ ակնոցներն ուրիշ նպատակ ունին: Թուսաստանի մի քանի նաճանգայ մէջ հազարաւոր կովբուր երեզներու հօտեր կապուտակ ակնոցներ կը կրեն զերծ մնալու համար աչացաւութիւններէն զոր ձեանց ցորացմունք կրնան պատճառել: Կ'երեւի թէ այդ բարի անասունք քաղաքակրթութեան այս բարիքը յօժարակամ կը վայելեն, զի ծանրութեամբ կը շրջին եւ այդ խոշոր ակնոցները հանելու չեն ջանար:

ԱՆՏԱՌԱՅ ՕԴՈՅՆ ԵՒ ՀՈՂՈՅՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՍԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Մինչեւ ցարդ ընկալեալ կարծեաց հակառակ, որով անտառներու պարունակած թթուածնի պատճառաւ, հոն չնչուած օդին առողջարար զօրութիւն մը կ'ընծայուէր, արդի գիտուններէ ու մանք կը յայտարարին թէ անտառաց օդն արտասուլոր թթուածին մը չպարունակիր: Եւ այս անսփ յայտ է թէ մարդոյ եւ անասնոց սպառած մեծաքանակ թթուածնի նկատմամբ անտառաց արտադրածը խիստ քիչ բան մը է: Վասն զի հաշուած է թէ մէն մի հարիւրակալ (hectare) անտառի մաքրած օդը չորս հոգւոյ բնակութեամբ կը սպառի:

Ուստի, անտառներն՝ իրենց ողջապահիկ ազդեցութիւնը պարտին, ոչ թէ մեծաքանակ թթուածնի մը յատկութեան, այլ իւրեանց կարի շատ մաքրութեան: Եւ յիշուի, անտառաց օդն ո՛չ գոլորչի, ո՛չ մութ, ո՛չ գազ, եւ ո՛չ վնասակար շոգիներ ունի, եւ քաղաքաց օդէն շատ նուազ մանրորդի սերմեր կը պարունակէ: Լերադինեաց եւ Սուսոյ խուզարկութիւնք արագուցին թէ, անտառն իւր անհամար ճիւղերովն, զտիչ զօրութիւն մ'ունի, եւ հողմերու դրսէն բերած փոշիներուն եւ մանրորդերուն մի մասը յինքն քաշելու յատկութեամբ ճոխացեալ է, որով զօդը մեքենաբար կը մաքրէ:

Նոյնպէս անտառաց օդոյն առողջարար զօրութիւնն օգտբաժնի պատճառներէ եւս կախումն ունի: Տօթակէզ արեգակնն ջերմութեան եւ սաստկաշունչ հողմոց դէմ, մանաւանդ ընդդէմ հիւսիսային չոր եւ կծու հողմոց՝ որք զիւրաւ տապաղին հիւսնդութիւններ կը պատճառեն. նուազ փոփոխութիւնք բարեխառնութեանց, եւ վերջապէս մեծաքանակ օզոնն (ozone) զոր անտառն կը պարունակէ, այս ամենայն՝ անտառաց օդին առողջապահիկ յատկութիւններ տալու կը համընթանան:

Յ. Վ. Բ.

ԿԵԱՆՔ ԲԱՌԻՑ




Ի ՄԱՍՆԱԻՈՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԵԱԼ

ՅՐԱՆՍԵՐԷՆ ԲԱՌԻՑ ՎՐԱՑԷՆ



Ք Ա Ղ Ե Ա Լ

ՑՊԱՐԱԷՆ ՏՊԱՄՍԹԵՔԷՌԷ



Գիրք Առաջին

ՆԵՐԱԾՈՒԹԵՐԻՆ

Արդի պատութիւնք հաստատեցին թէ լեզուներն ալ կենսաւոր գործարանաւորութիւնք են, որոց կեանք՝ թէեւ պարզապէս մտաւորական՝ ալ բուսական կամ կենդանական աշխարհաց կեանքին չափ իրական են:

Մինչեւ ցարդ դասական լեզուն իբրեւ մեռեալ կը նկատուէր եւ զայն կ'ուսումնասիրէին միայն ՚ի խնդիր մատենագրական գեղեցկութեան:

Ստանկրիտ եւ մանաւանդ Աքաա լեզուաց ծանօթութիւնը, հմտաց առջեւ նոր եւ կարեւոր խուզարկութեանց ասպարէզ մը բացաւ: Այն նմանութիւնները զորս նշմարեցին բանասէրք լեզուաց զանազան խումբերուն մէջ, զարթուցին նոցա հետաքրքրութիւնն եւ հրակիրեցին զայնս աւելի խոր հետազոտութեանց որոց մեծամեծ արդիւնք իսկոյն զգալի եղան: (1)

(1) Տարակոյս չկայ որ այս զանազան ուսումնասիրութեանց շարքին մէջ ուրեք ուրեք անկորդ եւ անբացայտ մնացեալ տեղերն պիտի լրանան. երբ Արևելեան մէկ երկու գլխաւոր լեզուաց անհրաժեշտ գիտութիւնը բանասիրաց մէջ աւելի ծաւալի եւ զարգանայ:

Առաջիկայ երկասիրութեան մէջ՝ պիտի սահմանափակենք մեր տուած դիտելիքն այն կէտերուն վրայ, զորս գիտութիւնը՝ երկար փորձառութեամբք՝ ճշգրտած կ'երևուի: Ենթադրութեանց սահմանն ընդարձակ է՝ մանաւանդ ստուգարանութեանց ճիւղին մէջ՝ եւ չկրնար ամիտփիլ մեր սակաւաթիւ էջերուն մէջ:

Փոսնաբէն բառից կազմութեան պարտպելէ յառաջ՝ լուծենք նախ մէկ քանի ընդհանուր խնդիրներ, որք ամէն լեզուաց կը պատկանին:

Ա. Եւ նախ, ո՞րն է լեզուին ծագումը: Այս խնդիրը շատ լուզուեցաւ ըայց մինչեւ ցարդ ենթադրութեանց կամ առ առաւելն հաւանակութեանց միայն կրցաւ յանգիլ. անոր ուսումնական լուծումը վերապահեալ է այն ժամանակին՝ յորում լեզուաց դասաւորութիւնն, անոնց հետզհետէ կրած փոփոխութեանց հաստատուն օրէնքը մինչեւ ցայն կէտ պարզուին որ մեզ ներելի ըլլաց աստիճանաւ յետս յետս երթալով՝ բառից նախնական վիճակը կատարելագոյնս պատկերել (1):

Բ. Լեզուն անդուլ յեղափոխութեան մէջ է, մէկ կողմէն հնաւանդ բառից եւ հնչմանց պահպանութեան փափաքն՝ որուն առաւել եւս կը յորդորուի ժողովուրդն իւր կրօնական մատենից ունկնդրութեամբ կամ ընթերցմամբն. միւս կողմէն հնչման մէջ զանազան պատճառներով սարդած փոփոխութիւնք, չարադրութեան ձևերու՝ ըստ պահանջելոյ իմաստից՝ այլալուծիւնն, եւ հուսկ ուրեմն նորաբանութիւնք, երկու հակառակ հոսանաց մէջ լեզուն միակերպ կը սարուբերեն կամ կը նորոգեն: Այս յեղափոխական ոգւոյն ճնորհիւն է որ նախնական լեզուները կրցած են փոխուիլ տարբեր տարբեր լեզուաց: Եթէ լեզուի մը մէջ ՚ի պայքար մտած այս երկու հակառակ ազդեցութեանց մին զազրի կամ անդործ մնայ, արդիւնքն հաւասարագոյնս միասակար են լեզուին զարդացման: Եթէ ենթադրենք որ լեզու մը անփոփոխ սեւեռեալ մնայ իւր ընթացից ո՞ր եւ է մէկ կէտին վրայ, պէտք է

(1) Անոր որ աւելի ուշով հետազոտած են երախային ճգունքն իւր խնդրած առարկաները բացատրելու համար՝ փոքր ՚ի շատե կրնան մակաբերել մարդկային լեզուին նախնական կազմութեան եզանակն, ընդհանրապէս մոնոկիկն առարկային ամենէն աւելի զգալի մէկ յատկութիւնն արտասոյսող հնչմամբ կամ ձայնով մը նոյն առարկայն կը նշանակէ: Ըսուած է թէ Հայերէն լեզուին մէջ նախնական բառից շտաբուն ձեւն այս նմանաձայնութիւնը կը ճշմարտէ, ինչպէս են կաթ, ջուր, օձ, աճ (վախ) եւ այլն բառերը:

նաեւ ընդունինք որ անոր մտաւորական եւ նիւթական կացութիւնն ալ նոյն կէտին վրայ սեւեռեալ մնացած է: Աւսնդութեանց տարապայման յարգանքն եթէ լեզուն արգելու զուզընթանալէ գաղափարաց ընթացքին՝ հակասութիւն մը կը ծագէ այն լեզուն վործածող ազգին գաղափարաց եւ այն գաղափարները բացատրելու ձեւին մէջ, եւ այնու լեզուն ապիկար մնալով կը կորսուի: Ընդհակառակն եթէ այլայլութիւնք եւ նորաբանութիւնք ծայրայեղ շտապաւ կատարուին, լեզուն որ եւ է հաստատութիւն չկրնար ունենալ եւ հետք մը չկրնար ձգել:

Ասոր օրինակ կրնան համարուիլ Ամերիկայի վայրենի ժողովրդոց ոմանց գործածած բարբառներն, որոց արագ փոփոխումը զանոնք քիչ ժամանակի մէջ իրարմէ բազրոզին կը սարսերէ (1): Միով բանիւ լեզուն գործիք մ'է, որով մարդիկ իրարու հետ կը հաղորդակցին. ուստի որչափ մտածութեան հորիզոնն ընդարձակի, այնչափ լեզուն նորանոր գաղափարներ բացատրելով կ'աճի եւ կ'ազնուանայ: Լեզուին արժանապատուութիւնը մտածութեան մէջ կը կայանայ եւ իւր յառաջադիմութիւնն անոր յառաջադիմութեան մէջ փնտռելու է:

Աւելի մասնաւորելով մեր խուզարկութիւնները, նկատենք լեզուի մը երեք զանազան կերպաւորութիւնն, այսինքն բառերը՝ քերականական ձեւերն եւ շարադասութիւնը:

Քերականական ձեւ ըսելով լեզուի մը հոլովներն եւ լծորդութիւնները կը հասկցուին. սոքա տեսակ մը կազապար են յորում բառերը կուգան ձեւակերպիլ: Ժողովուրդ մը կրնայ իւր բառերն եւ նոցա շարադասութիւնն այլայլել կամ փոփոխել, բայց լեզուն փոխուած չըլլար եթէ քերականական ձեւերն անխախտ պահուին: Բայց նոյն բառերն եւ նոյն շարադասութիւնը պահելով հանդերձ լեզուն կայլափոխէր՝ եթէ կարելի ըլլար իւր քերականական ձեւերն այլափոխել. վասնզի յայսմ կը կայանան լեզուին ազի կոչուած հանդամանք: Անգլիերէն լեզուն իրօք Գերմանական լեզու մնացած է՝ թէեւ Գաղղիերէնէ 25-30000 բառ փոխ առած է. նմանապէս Պարսկերէնը՝ թէեւ Արաբական բառիւք ողողելալ հնդեւրոպական մնացած է, վասնզի իւր քերականութիւնն սեմական ողիէն զերծ մնացած է: Բառերը կ'ստեղծուին, կը գործածուին, կը փոփոխին, փոխ կ'առնուին, կը մոռցուին, բայց լեզուն նոյնը

(1) Վ. այրենեաց իրենց լեզուն փոփոխելու գիւրութիւնն կը մեկնէ մինչեւ աստիճան մը նախնական ժողովրդոց նախամայր լեզուն փոփոխելն ալ:

կը մնայ եթէ զանոնք ամենքը նոյն կազապարին վրայ ձուլենք: Այս քերականական ձեւոց տարբերութեամբն է որ լեզուք իրարմէ կը տարբերին: Այս ինչ լեզուն իւր դերբայից ձոխութեամբ կը փայլի եւ այն ինչ լեզուն իւր ժամանակաց եւ եղանակաց առատութեամբ. ամենքն ալ ըստ հանճարոյ զայնս պորձածող ազգաց վիճակին՝ մեծ հաւաստիք են մարդկային մտածութեան, զօրութեան եւ ձոխութեան: Երբեմն զարուն ողին այնչափ զօրութեամբ կը ներդործէ ընդհանուրին վրայ, որ լեզուներն, ինչ ալ ըլլայ իրենց իսկական կազմութիւնն՝ չեն կրնար անոր ազդեցութենէն զերծ մնալ. զորօրինակ, նոր լեզուաց ընդհանուր նկարագիրը վերալուծական ըլլալ է. այս ազդեցութիւնը կը տեսնուի ամէն արդի լեզուաց վրայ, այնպէս որ, օրինակ իմն, աշխարհիկ բարբառն ազաւաղեալ կամ այլալեալ զրաբառ ենթադրելով հանդերձ՝ եւ հետզհետէ աւելի փոխառութիւններ ալ ընելով՝ ի հին լեզուէն՝ «իբեցից կամ եբեայց բաղադրական ձեւոյն տեղ՝ պեթ «իբե» ըսել նախամեծար կը համարի: Այդ հոսանաց դէմ մրցելն, թող թէ անհնար՝ աւելորդ իսկ է:

Բառերը բերնին կամ հագագին արտաբերած պարզ կամ բարդ հնչմունքն են. բաւական որոշ նշանակութիւն մը ստանալէ յետոյ կրնան իրարու աւելցուելով բարդեր կազմել, կամ ըստ ինքեան նշանակութիւնին կտրուած զանազան մասնիկներու յաւելմամբ ածանցներ յերիւրել: Ամէն լեզու հաւասարապէս բարդելու կամ ածանցելու յարմարութիւն չունի: Փոսաներէնի մէջ շատ ածանցմունք եւ քիչ բարդ կայ: Մինչդեռ հայերէնի մէջ անոր հակառակն աւելի բաղադրեալ բառեր կան: Այս երկու ձեւերն ալ լեզուի մը հարստութեան կը նպաստեն. բայց մասնական թիւը սահմանաւոր ըլլալով ստոնցմով ածանցեալ բառերն աւելի դիւրիմաց եւ բացայայտ են:

Վերջապէս բառերը զաղափարաց յայտարար նշաններն են եւ ըստ այս զաղափարաց իրենց նշանակութիւնը կը փոխուի:

Այս է եւ մեր ուսումնասիրելիք կէտը:

(Շարայաբելի)

Թ. ԹԷՐԶԵԱՆ



ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Շարայարութիւն (*) Էս վերջ

ՍՐԱՐՇԱԻ

Սրարչաւն ալ մի եւ նոյն օրինօք կը կատարուի բայց առաջինէն նուազ կը յոգնեցունէ երբ չափաւոր լինի:

Սրարչաւի ժամանակ մարմինդ սակաւ մի յառաջ ծռած եւ գլուխդ ուղղահայեաց պիտի լինի:

Ծղիները եւ դաստակները յաջորդաբար յառաջ կը խաղան այնպէս զի ձախ բազուկն իւր շարժումը կատարէ աջ ոտքիդ հետ, եւ աջ բազուկն ալ՝ ձախ ոտքին հետ:

Գարչապարներդ հաղիւ գետինը գպչին որպէս զի քայլերդ պէտք եղածին չափ թեթեւ լինին:

Ի սկզբան այս կրթանքը յոյժ կը յոգնեցունէ, բայց տակաւ սովորութիւնը կը յաղթէ այս դժուարութեան:

Սակայն մեծ զգուշութեամբ կատարելու է այս կրթանքը, վասն զի թոքերը եւ սիրտը շատ կը յոգնեցունէ. ծնողք եւ դասատուք չափաւորելու են ազայոց ճգունքը երբ յարմար դատեն: Երկարատեւ եւ արագ սրարչաւք՝ իրենց ամբողջ ոյժն ստացած երիտասարդաց համար վերապահեալ են, ոչ թէ մանկանց:

Յետ սրարչաւի մտիւր անմիջապէս ամէն կողմէ փակ սենեակ մի՛ չմտելու համար, եւ հանէ՛ շապիկդ ու ամեն թրջած զգեստներդ:


Սրարչաւի ժամանակ թեթեւ հագած ըլլալու ես. կօշիկներդ չնեղեն ոտքերդ. օգտակար է նաեւ մէջքդ եւ փորիդ վարի կողմը բռնելու համար գօտի կապել, բայց քիչ սեղմելով:

Հուսկ ուրեմն կատարէ՛ սրարչաւն ձաշէ գոնէ երեք ժամ յետոյ եւ բարեխառն օգով:

ՅՈՎԷ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(*) Տե՛ս Պարիզի Բ. Տարի, էջ 240

Էջ	Տող	ՎՐԻՊԱԿՔ	ՈՒՂՂԵԼԻՔ
218	1	Ելլարզլըի	Ելլարզլըիի
219	2	Չյօղած	Չյօտած
219	13	Երաստով	Գրաստով
220	18	Տար կամ	Դար կամ
221	7	Նարխանցի	Նորխանցի
225	24	Նսեմատիւ	Նսեմատես
225	36	Կապաղովկիոյ և. եթէ	Կապաղովկիոյ՝ եթէ



ՊՍՏԿԵՐ տասն է. հինգ օրը մի անգամ կը հրատարակուի.

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլտոյ համար 40 դահեկան
Գաւառաց է. օտար երկիրներու համար
քղրատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Իշխարանցիւր թիւ 2 դահեկան

ՊՍՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւչիլ փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան է. քերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար :

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YËCHIL N ° 1

معرف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولتمشدر